Շրջակա միջավայրի նախարար
պարոն Հակոբ Սիմիդյանին

# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. **Քաղաքացիական ծառայողի անունը, ազգանունը**
   Սևակ Բալոյան,

2. **Զբաղեցրած պաշտոնը**
   Կենսառեսուրսների կառավարման վարչության պետ,

3. **Գործուղման վայրը և ժամկետները**
   Ուզբեկստան, քաղաք Սամարղանդ, 2024 թվականի փետրվարի 9-ից մինչև փետրվարի19-ը

4. **Հրավիրող կողմը**
   «Վայրի կենդանիների միգրացվող տեսակների պահպանության մասին» կոնվենցիայի քարտուղարություն,

5. **Գործուղման նպատակը**
   Մասնակցություն «Վայրի կենդանիների միգրացվող տեսակների պահպանության մասին» կոնվենցիայի անդամ երկրների կոնֆերանսի 14-րդ հանդիպմանը (CMS COP14)։

6. **Քննարկված թեմաները,**

- Քարտուղարության ֆինանսական և վարչական հարցերը, 2024-2026 թվականների բյուջեի նախագիծը (Budget for 2024-2026 and Work Programme for the intersessional Period between COP14 and COP15),
- Միգրացիոն տեսակների համար նոր ռազմավարական ծրագիր (UNEP/CMS/COP14/Doc.14.2),
- Գիտական խորհրդի վերակառուցում, արդյունքների գնահատում (UNEP/CMS/COP14/Doc.15.1),
- Սիներգիա և գործընկերություն (UNEP/CMS/COP14/Doc.18.1),
- կենսաբազմազանության և էկոհամակարգային ծառայությունների (IPBES) վերաբերյալ գիտական քաղաքականության միջկառավարական հարթակի հետ քարտուղարության համագործակցություն (UNEP/CMS/COP14/Doc.18.2/Rev.1.),
- Միգրացվող վայրի կենդանիների ատլաս (UNEP/CMS/COP14/Doc.20), միգրացվող տեսակների պահպանության կարգավիճակի վերանայում (UNEP/CMS/COP14/Doc.21/Rev.1),
- Ազգային զեկույցներ (UNEP/CMS/COP14/Doc.23),
- Ազգային օրենսդրությունների ծրագիրը և դրանց վերանայման մեխանիզմները (UNEP/CMS/COP14/Doc.24),
- Ջրային տեսակների պահպանության հիմնախնդիրներ (UNEP/CMS/COP14/Doc.27.1.1/Rev.1),

- Ծովային աղտոտվածության ազդեցությունը միգրացվող տեսակների վրա (UNEP/CMS/COP14/Doc.27.2.1/Rev.2.),
- Ծովային աղմուկ. (UNEP/CMS/COP14/Doc.27.2.2/Rev.2),
- Ծովային աղտոտվածություն և այլ սպառնալիքներ. Ստորջրյա հանքարդյունաբերություն. (UNEP/CMS/COP14/27.2.4/Rev.1, UNEP/CMS/COP14/27.2.4/Add.1),
- Ծովային կաթնասուններ. Կետանմանների պահպանության առաջնահերթությունները (UNEP/CMS/COP14/Doc.27.5.1/Rev.1),
- Աֆրիկյան Եվրասիական տարածաշրջանի միգրացվող ցամաքային թռչունների գործողությունների ծրագիր (UNEP/CMS/COP14/Doc.28.2 և UNEP/CMS/COP14/ Doc.28.2/Add.1),
- Միգրացվող թռչունների թունավորման կանխարգելում. (UNEP/CMS/COP14/Doc.28.3 և UNEP/CMS/COP14/Doc.28.3/Add.1.),
- Միգրացիոն ուղիներ. (UNEP/CMS/COP14/Doc.28.4.1/Rev.1 և UNEP/CMS/COP14/Doc.28.4.1/Add.1.),
- Կենտրոնական Ասիայի միգրացիոն ուղիներ. (UNEP/CMS/COP14/Doc.28.4.2.),
- Կոնվենցիայի 2-րդ հավելվածում ընդգրկված կենդանիների ընտանիքների և ցեղերի տարանջատման ուղեցույց. (UNEP/CMS/COP14/Doc.31.2/Rev.1.)
- Լույսի աղտոտում. (UNEP/CMS/COP14/Doc.30.4.4),
- Պլաստիկի աղտոտում. (UNEP/CMS/COP14/Doc.30.4.5/Rev.1.),
- Կենդանաբուծություն և շրջակա միջավայրի պահպանության սոցիալական բարդությունները. (UNEP/CMS/COP14/Doc.30.5/Rev.1.),
- Տուրիզմ. (UNEP/CMS/COP14/Doc.30.6/Rev.1),
- անդրսահմանային պահպանվող տարածքների մասին (UNEP/CMS/COP14/Doc.30.2.2/Rev.2),
- համայնքային մասնակցության և գործողությունների իրականացում (UNEP/CMS/COP14/Doc.30.2.3),
- ենթակառուցվածքների և ազդեցության գնահատում (UNEP/CMS/COP14/Doc.30.3.1/Rev.1.),
- վերականգնվող էներգիայի և էլեկտրահաղորդման գծեր (UNEP/CMS/COP14/Doc.30.3.2.),
- վայրի կենդանիների հիվանդությունների տարածման կանխարգելում (UNEP/CMS/COP14/Doc.30.4.3.):

## 7. Հանդիպումները, ելույթները

Վայրի կենդանիների միգրացվող տեսակների պահպանության մասին կոնվենցիայի (CMS) կողմերի 14-րդ (COP 14) հանդիպման պաշտոնական բացման արարողությունը տեղի ունեցավ ս.թ. փետրվարի 12-ին: Պաշտոնական բացման նախորդ օրը տեղի էր ունեցել Կոնվենցիայի Մշտական կոմիտեի նիստը և նախարարական բարձր մակարդակի հանդիպումը:

Բացման խոսքով հանդես եկավ Ուզբեկստանի վարչապետը: Ողջունելով մասնակիցներին՝ վարչապետը կարևորեց բնության պահպանության կարևորությունը՝ մարդ-բնություն ներդաշնակության համատեքստում: Բացման խոսքով հանդես եկավ նաև ՄԱԿ-ի գլխավոր քարտուղարի տեղակալ, ՄԱԿ-ի շրջակա միջավայրի պահպանության ծրագրի (UNEP) ղեկավարը՝ ընդգծելով, որ բոլոր Կոնվենցիայի կողմ հանդիսացող բոլոր

երկրները պետք է ընդգրկված լինեն միգրացվող վայրի կենդանատեսակների պահպանության ջանքերում: Ողջույնի խոսքով հանդես եկավ նաև Կոնվենցիայի գործադիր քարտուղարը՝ ընդգծելով Կոնվենցիայի ուրույն ու կարևոր դերը վայրի կենդանիների միգրացիայի ընթացքում առաջացած խնդիրների լուծման համատեքստում: Վերջինս նշեց, որ COP 14-ի <<Բնությունը չի ճանաչում սահմաններ >> կարգախոսը պետք է ամրապնդի վայրի կենդանատեսակների և դրանց ապրելավայրերի պահպանության միջազգային համագործակցությունը: Գործադիր քարտուղարը բարձր գնահատեց Գլոբալ Բնապահպանական Ֆոնդի (GEF)-ի գլխավոր տնօրենի մասնակցությունը COP 14-ին՝ նշելով, որ եթե բնությունը չի ճանաչում սահմաններ, ապա GEF-ի կողմից ֆինանսավորվող բնապահպանական ծրագրերը նույնպես չպետք է ճանաչեն սահմաններ և կարևորեց CMS-ի և GEF-ի հետագա համագործակցությունը: Բացման խոսքով հանդես եկավ նաև Բնության պահպանության միջազգային միության (IUCN) գլխավոր քարտուղարը՝ ընգծելով միջազգային համագործակցության և բնապահպանական խնդիրների լուծման նորարարարական մոտեցումների անհրաժեշտությունը, որոնք չպետք է ճանաչեն երկրների քաղաքական սահմանները: Վերջինս կրկնեց IUCN-ի հանձնառությունը՝ աջակցելու CMS-ի որոշումների կայացմանը:

Նույն օրը կողմերի ընտրությունների միջոցով տեղի ունեցավ կազմակերպչական հարցերի վերաբերյալ որոշումներ: Ուզբեկստանի բնապահպանության, շրջակա միջավայրի պահպանության և կլիմայի փոփոխության նախարարն ընտրվեց COP 14-ի նախագահող, Մեծ Բրիտանիայի ներկայացուցիչը՝ Կոնվենցիայի համաժողովի նիստերի վարման (CoW) նախագահ, Հարավային Աֆրիկայի ներկայացուցիչը՝ փոխնախագահ: Ընտրությունների միջոցով տեղի ունեցավ COP 14-ի օրակարգի և նիստերի ժամանակացույցի հաստատում:

Հաշվետվությունով հանդես եկավ COP 13-ի նախագահող Հնդկաստանի ներկայացուցիչը՝ ներկայացնելով վերջին երեք տարվա ընթացքում կատարված աշխատանքների ամփոփ հաշվետվությունը և որպես բացասական կողմ նշեց կողմերի կողմից Կոնվենցիայի անդամավճարների ոչ ամբողջական հավաքագրումը: Հաշվետվություններով հանդես եկան նաև Կոնվենցիայի գիտական մարմնի, դեպոզիտարիատի, կոնվենցիայի համաձայնագրերի քարտուղարությունների, բնապահպանական ոչ կառավարական մարմինների ներկայացուցիչները: Հաշվետվությունով հանդես եկավ նաև ՄԱԿ-ի շրջակա միջավայրի պահպանության ծրագրի (UNEP) ղեկավարը:

Տեղի ունեցավ Կոնվենցիայի նիստերի բացումը, որի ժամանակ ստեղծվեցին հինգ աշխատանքային խմբեր՝ թռչնատեսակների, ջրային և ցամաքային տեսակների, բյուջեի, ինստիտուցիոնալ և միջոլորտային խնդիրների վերաբերյալ:

**13.02.2024թ.**

Նիստը (CoW) բացվեց՝ քննարկելու գիտական գնահատականներն ու զեկույցները, ռազմավարական և ինստիտուցիոնալ հարցերը, գիտական խորհրդի հետ կապված հարցերը և Կոնվենցիայի մեկնաբանմանն ու իրականացմանը վերաբերող հարցերը: Կոնվենցիայի Քարտուղարությունն ամփոփեց միգրացվող տեսակների պահպանության կարգավիճակի վերանայման ուղղությամբ հարցը և ներկայացրեց UNEP/CMS/COP14/Doc.21/Rev.1) փաստաթուղթը: ՄԱԿ-ի շրջակա միջավայրի ծրագրի Համաշխարհային պահպանության մոնիտորինգի կենտրոնը (UNEP-WCMC) ամփոփեց երեք զեկույցներ՝ միգրացվող տեսակների ուղղակի օգտագործում և առևտուր (UNEP/CMS/COP14/Doc.21.2) և CMS-ի հավելվածներում ընդգրկված առանձին տեսակների պահպանության վերանայում (UNEP/CMS/COP14/Doc.21.3) փաստաթղթերը:

Քարտուղարությունը ներկայացրեց Միգրացիոն տեսակների համար նոր ռազմավարական ծրագրի (UNEP/CMS/COP14/Doc.14.2) բանաձևի նախագիծը: Ներկացվեց նաև UNEP/CMS/COP14/Doc.18.2/Rev.1. փաստաթուղթը, որը վերաբերում էր կենսաբազմազանության և էկոհամակարգային ծառայությունների (IPBES) վերաբերյալ գիտական քաղաքականության միջկառավարական հարթակի հետ քարտուղարության համագործակցությանը:

Կոնվենցիայի գիտական մարմնի կողմից կողմերի քննարկմանը ներկայացվեց միգրացվող վայրի կենդանիների ատլասը: Ներկայացվեց նաև UNEP/CMS/COP14/Doc.30.1.1/Rev.1 փաստաթուղթը, որը վերաբերում էր վայրի բնության նկատմամբ հանցավորության դեմ պայքարին: Ղազախստանը և Իսրայելը առաջարկեցին փաստաթղթում կատարել փոփոխություններ և այն համահունչ դարձնել Անհետացման եզրին գտնվող վայրի կենդանիների և բույսերի և դրանց ածանցյալների (CITES) առևտրի մասին Կոնվենցիայի մոտեցմանը, այն է բռնագրավել միգրացվող վայրի կենդանիների ապօրինի ձեռք բերված և օգտագործման ենթակա տեսակները և հնարավորության դեպքում վերջիններիս բնություն բաց թողնել: Ներկայացվեց նաև բնապահպանական համագործակցության և քաղաքական ասպեկտների վերաբերյալ (UNEP/CMS/COP14/Doc.30.2.1.1; UNEP/CMS/COP14/Inf. Doc.30.2.1.1; and UNEP/CMS/COP14/Doc.30.2.1.2) փաստաթղթերը:

**15.02.2024թ.**

Կոնվենցիայի համաժողովի նիստերի վարման (CoW) նախագահը բացելով նիստը՝ ամփոփեց աշխատանքային խմբերի կողմից կատարված աշխատանքները:

Այնուհետև Կոնվենցիայի Գիտական խորհուրդը ներկայացրեց կլիմայի փոփոխության ազդեցությունը միգրացվող կենդանատեսակների բնականոն գործունեության վրա COP14/Doc.30.4.1/Rev.3 փաստաթուղթը: Վայրի կենդանիների պահպանության միջազգային ֆոնդը (IFAW) 15 այլ ոչ կառավարական կազմակերպությունների հետ համատեղ կարևորեց միգրացվող կենդանատեսակների դերը կլիմայի փոփոխության ազդեցության մեղմացման համատեքստում:

Կոնվենցիայի համաժողովի նիստերի վարման (CoW) նախագահը յուրաքանչյուր փաստաթղթի ներկայացումից հետո քվեարկության էր դնում դրա հաստատման հարցը: Որոշ փաստաթղթերի վերաբերյալ Կողմերի կողմից ներկայացվեցին լրացուցիչ առաջարկություններ կամ առարկություններ: Համապատասխան առաջարկությունների և առարկությունների քննարկումներից հետո բոլոր փաստաթղթերը քվեարկությունների միջոցով հաստատվեցին:

Հանդիպման ընթացքում ելույթներ նախատեսված չէին: Ամեն օր մինչև նիստերի սկսվելը և դրա ավարտից հետո տարածաշրջանային երկրները հանդիպումներ էին անցկացնում՝ նիստերի ժամանակ ընդունվելիք որոշումների վերաբերյալ կոնսեսուսային դիրքորոշում արտահայտելու, ինչպես նաև ընթացիկ հարցերի քննարկման նպատակով: Ընդգրկված եմ եղել Եվրոպական տարածաշրջանի աշխատանքային խմբի աշխատանքներում, որտեղ ներկայացրել եմ նաև Կոնվենցիայով ստանձնած պարտավորությունների ընթացքի վերաբերյալ տեղեկատվություն: Մասնակցել եմ Կենտրոնական Ասիայի Թռիչքուղու պահպանության համար ստեղծված աշխատանքային խմբի, Saker Falcon-ի զլրբալ գործողությունների ծրագրի իրականացման քննարկումներին:

8. **Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը**

Վայրի կենդանիների միգրացվող տեսակների պահպանության մասին կոնվենցիայի (CMS) կողմերի 14-րդ (COP 14) հանդիպման հիմնական արդյունքները.

- Կլիմայի փոփոխության վերաբերյալ բանաձևի ընդունում և միգրացիոն վայրի կենդանիների նկատմամբ կլիմայի փոփոխության ազդեցության վերաբերյալ զեկույցի հաստատում,
- Միգրացվող տեսակների անօրինական և անկանոն օգտագործման վերաբերյալ իրականացվող միջոցառումների խստացում,
- Միգրացվող տեսակների վրա լուսային աղտոտվածության ազդեցության վերաբերյալ Նոր գլոբալ ուղեցույցների ընդունում,
- Միգրացվող վայրի կենդանատեսակների պահպանության վերաբերյալ ռազմավարական պլանի (2024-2032) ընդունում,
- Վայրի կենդանիների միգրացվող տեսակների մասին կոնվենցիայի հավելվածներում 14 լրացուցիչ կենդանատեսակների ընդգրկում, այդ թվում՝ Եվրասիական լուսանը (Lynx lynx), Մանուլը (Felis manul) և այլն:
- 6 տեսակների (շիմպանզե, ծովային չղջիկ, կապույտ ակուլա և այլն) պահպանության վերաբերյալ նոր համաձայնեցված գործողությունների ընդունում,
- 9 տեսակների (Ընձուղտ, ատլանտյան սապատավոր դելֆին, ալբատրոս և այլն) պահպանության վերաբերյալ գործող համաձայնեցված գործողությունների ընդլայնում:
- Կենտրոնական Ասիայի թռիչքուղու պահպանության մասին գործողությունների ծրագրի ընդունում, որն իր մեջ ընդգրկում է 30 պետությունների տարածքներ, այդ թվում Հայաստանի:
- Միգրացվող թռչունների անօրինական որսի և առևտրի կանխարգելման միջոցառումների ընդունում,
- Միգրացվող կենդանիների ատլասի հաստատում,
- Թռչունների պահպանություն գործողությունների ծրագրի հաստատում,

Կոնվենցիայի I և II հավելվածներում քվեարկությունների միջոցով ընդգրկվեցին հետևյալ կենդանատեսակները՝

1. Եվրասիական լուսան Eurasian Lynx ,
2. Մանուլ (Felis manul),
3. Լամա Գուանիկա (Lama guanicoe),
4. Դելֆին-Աֆալինա (Tursiops truncatus gephyreus),
5. Ծովային խոզուկ (Phocoena phocoena),
6. Պերուական հավալուսն (Pelecanus thagus),
7. Magellanic Plover (Pluvianellus socialis),
8. Մորուքավոր անգղի Աֆրիկյան պոպուլյացիա (Gypaetus barbatus meridionalis),
9. Վագրային շնաձուկ (Carcharias taurus),
10. Blackchin Guitarfish (Glaucostegus cemiculus),
11. Bull Ray (Aetomylaeus bovinus),
12. Lusitanian Cownose Ray (Rhinoptera marginata),
13. Ոսկեզօծ լոքո (Brachyplatystoma rousseauxii) in Appendix II of the Convention
14. Laulao Catfish or Piramuta (Brachyplatystoma vaillantii):

Որոշվեց Վայրի կենդանիների միգրացվող տեսակներ կողմերի 15-րդ հանդիպումը կազմակերպել 2026 կամ 2027 թվականին, սակայն ընթացիկ ժամանակահատվածում որևէ երկրի կողմից առաջարկություններ չէին ստացվել: Կողմերի 15-րդ հանդիպման անցկացման վայրի ընտրությունը կիրականանա համապատասխան հայտերի ստացումից և քննարկումներից հետո:

**9. Ստորագրությունը, ամսաթիվը**

Գործուղվող Ս.Բալոյան

27.02.2024թ.